

Ի սրտէ շնորհակալ ենք վարժարանիս տնտեսական պատասխանատու Պրն. Մայքըլ Զաքարեանին, սիրելի մայրիկներ՝ Տիկ. Մարի Պալըզեանին, Տիկ. էլիզապէթ Գրիգորեանին, Տիկ. Իման Շոմալիին, բուժքոյր Սեդա Կէճէքուշեանին, իրենց հոգատար աշխատանքին համար:

Մեր խորին շնորհակալութիւնները կ'ուզենք յայտնել նաեւ Երուսաղէմի Բարեսիրաց Միութեան Վարչութեան, Աւագեան քոյրերուն, Տօքթ. Տինա Պլոքլանտին, Տիկ. Սեդա Կէճէքուշեանին, Տիար Սեւան Կէճէքուշեանին եւ Տիար Յակոբ Գլայճեանին, որ գեղեցիկ աւանդութեան համաձայն ամէն տարի մեր շրջանաւարտներուն նուէրներ կ'ընծայեն:

ԹԷՈԴՈՐՈՍ Ծ. ՎՐԴ. ԶԱՔԱՐԵԱՆ

Տեսուչ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի

ԽՈՇՔ ԵՒ ԽՕՍՔ

Ի՞նչ կը նշանակէ սիրել: Սիրել կը նշանակէ տեսնել չարիքը եւ սրբագրել զայն ներողամտօրէն: Սիրել կը նշանակէ բարձրանալ ու բարձրացնել բարեկամներն ու շուրջիները: Սիրել կը նշանակէ ազատագրել միտքն ու հոգին մեռած անցեալէն եւ բացուիլ ապագային:

Ի՞նչ են աշխարհի հոյակերտ եւ հսկայ տաճարները, եթէ ոչ Աստուծոյ ձօնուած քարակերտ ու սառած շարականներ, որոնք կ'արտացոլացնեն մարդուն անսահման երախտագիտութիւնը, իրենց Ստեղծիչին՝ Աստուծոյ: Այս հոյակերտ կառոյցները արդիւնք են անցեալի ազնուագոյն մտայղացման եւ անոր ձգտումներուն:

Խորհուրդ հարցուր անկէ, ով ինք իր նկատմամբ յաղթանակներ կրնայ արձանագրել:

Երջանկութիւնը բաժին կ'իյնայ անոնց, որոնք շատ կ'աշխատին:

Անբան մը միայն դատողութիւններ կ'ընէ եւ ուրիշները կը սեւցնէ: Ան միշտ պատրաստ է արդարացումներ գտնել իր անպիտանութեան համար:

Ով չի դատապարտեր չարիքը, ան կը նպաստէ ատոր իրագործման:

Զեր սխլաները փնտռող հակառակորդն աւելի օգտակար է, քան բարեկամը, որ կը ցանկայ թաքցնել ատոնք:

Ուր կը վերջանայ յոյսը, հոն պարապութիւն կը ծնի: